ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/27

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի,

Պատվիրատու Արարատի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Ա. Մուսիկյանի, Ա. Խաչատրյանի,

Երրորդ անձ «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Դարբինյանի, Ա. Հակոբյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 30.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին և նույն չափաբաժինների մասու[պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձի 31.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 06.06.2019թ. և 14.06.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքաբերի կողմից 20.06.2019թ. ներկայացվել է բողոքի լրացում:

Բողոքի քննությունն ավարտվել է 14.06.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.06.2019թ.-ին:

2. <u>«Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արարատի համայնքապետարանի կարիքների համար <<Լեդ լուսատուների>> ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ մասնակցության հայտեր են ներկայացրել Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանը և Ա/Ձ Արարատ Դարբինյանը:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի՝ Ընթացակարգի 1 և 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արարատ Դարբինյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 27.05.2019թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն և անգործության վերջնաժամկետ սահմանվել՝ պայմանագիր կնքելու մասին

հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու օրվան հաջորդող 5-րդ օրացուցային օրը (մինչև 03.06.2019թ. ներառյալ):

23.04.2019թ. ժամը 11:00 Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանը բանավոր պահանջել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովից ներկայացնել Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որին ի պատասխան՝ նույն օրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողը տրամադրել է այդ փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ հաստատված ստորագրությամբ և կնիքով:

Այնուհետև, Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանը նույն օրը՝ 23.04.2019թ. 13:00 արդեն գրավոր, էլեկտրոնային փոստի միջոցով պահանջել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովից ներկայացնել Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: Ի պատասխան նշված հարցմանը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ներկայացրել է Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ արդեն հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, երկրորդ անգամ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը լիովին տարբերվել է նույն հանձնաժողովի կողմից ավելի վաղ ներկայացված նույն ապրանքի տեխնիկական բնութագրից: Սակայն www.gnumner.am համացանցային կայքում բացակայում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որևէ նիստի արձանագրություն, որով Ա/Ձ Արարատ Դարբինյանից պահանջված լինել կատարել շտկում ներկայացված փաստաթղթերում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ 46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված

փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, Արարատի համայնքապետարանի կարիքների համար <<լեդ լուսատուների>> ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանը և Ա/Ձ Արարատ Դարբինյանը:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի՝ Ընթացակարգի 1 և 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արարատ Դարբինյանը, իսկ գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի՝ 1-ին չափաբաժնով սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը.

1	*315 1500*	*լեդ լուսատուներ*	*ցանկացած*	*Կիրառվող հզորությունը 60 ՎՏ±4% լուսային հոսքը ոչ պակաս 9500լմ սնուցման լարում 160վ ցանցի լարման հաճախականություն 50հց լուսային դիոդների քանակը առնվազն 56 հատ էլեկտրական ցնցումների դեմ պաշտպանության աստիճանը 3%*

				թերմոդինամիկական ջերմաստիճանը 5000կ+4% պաշտպանության աստիճանը iP65 լուսավորության բախշման տարբերակը 130-1500 լուսային դրայվեր Pf cosf › 0.9 օպտիկական ոսպնյակ- պոլիկարբոնատ տեղադրման եղանակը – կոնսուլային 1հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը 150- 170 Lm/1w երաշխիքը -5 տարի երաշխիքի սպասարկումը մատակարարի կողմից ներկայացնել փորձարկման արձանագրություն

Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 չափաժնի մասով ներկայացրած Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, այն է՝ առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված <<լուսային հոսքը ոչ պակաս 9500լմ>> փոխարեն Ա/Ձ Արարատ Դարբինյանի ներկայացրած տեխնիկական բնութագրում ամրագրված է ամագրված է անհասկանալի <<լուսային 9500 լմ>>: Իսկ թե դա ինչ լուսային է, անհասկանալի է:

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված <<ներկայացնել փորձարկման արձանագրություն>> ընդհանրապես բացակայում է Ա/Ձ Արարատ Դարբինյանի ներկայացրած տեխնիկական բնութագրում:

Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի՝ 2-րդ չափաբաժնով սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը.

2	315 1500	լեդ լուսատուներ	ցանկացած	Կիրառվող հզորությունը 50 ՎՏ±4 լուսային հոսքը ոչ պակաս 8300լմ սնուցման լարում 160վ ցանցի լարման հաճախականություն 50hg լուսային դիոդների քանակը առնվազն 56 հատ էլեկտրական ցնցումների դեմ պաշտպանության աստիճանը 3% թերմոդինամիկական ջերմաստիճանը 5000կ+4% պաշտպանության աստիճանը iP65 լուսավորության բախշման տարբերակը 130-1500 լուսային դրայվեր pf cosf › 0.9 օպտիկական ոսպնյակ- պոլիկարբոնատ տեղադրման եղանակը – կոնսուլային 1հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը 150- 170 Lm/1w երաշխիքը -5 տարի երաշխիքի սպասարկումը մատակարարի կողմից ներկայացնել փորձարկման արձանագրություն

Ա/Ձ Արարատ Դարբինյանը 2-րդ չափաժնի մասով ներկայացրած Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, այն է՝ առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված <<1հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը 150- 170 Lm/1w>> փոխարեն Ա/Ձ Արարատ Դարբինյանի ներկայացրած տեխնիկական բնութագրով առաջարկվել է. <<1հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը 140 Lm/1w >>: Ակնհայտ է, որ 150- 170 Lm/1w չի համապատասխանում 140 Lm/1w պահանջին:

Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված <<ներկայացնել փորձարկման արձանագրություն>> ընդհանրապես բացակայում է Ա/Ձ Արարատ Դարբինյանի ներկայացրած տեխնիկական բնութագրում:

Վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, այն է՝ առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագիրը, չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրին:

Այլ կերպ ասած, ըստ ներկայացված փաստաթղթերի, Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով չի առաջարկում Պատվիրատուի կարիքին և պահանջին համապատասխան ապրանք:

Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատելով Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով ներկայացված Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, այն է՝ առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագիրը, Ընթացակարգի Հրավերի պահանջներին համապատասխանող, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանը բանավոր խնդրել է իրեն տրամադրել Ընթացակարգի առաջին տեղ/ընտրված մասնակից ճանաչված Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից երկրորդ փուլով ներկայացված փաստաթղթերը՝ ինչը քարտուղարի կողմից ներկայացվել է էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ այնուհետև Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանի կողմից արդեն գրավոր դիմումով կրկին պահանջել է ներկայացրել Ա/Ձ Արարատ

Դարբինյանի կողմից երկրորդ փուլով ներկայացված փաստաթղթերը և այս անգամ Ընկերությանը ներկայացվել են արդեն միանգամայն այլ փաստաթղթեր՝ այսինքն ստացվում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից առանց որևէ արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին արձանագրության՝ մասնակցին տրվել է երկրորդ փուլով ներկայացված փաստաթղթերում շտկման հնարավորություն, որի մասին տեղեկացվել ենք միայն փաստաթղթերի պահանջ ներկայացնելու ժամանակ:

Սակայն թե՛ առաջին փուլով Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, և թե՛ երկրորդ փուլով ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Ա/Ձ Արարատ Դարբինյանին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին և նույն չափաբաժինների մասու[պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանի կողմից 30.05.2019թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/37 բողոքի քննության ժամանակ Արարատի համայնքապետարանի ներկայացուցիչները ընդունեցին, որ իրականում Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացրած Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, այն է՝ առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ: Ընդ որում, պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ նշված թերությունները չեն կատել և

միայն սույն բողոքի հետևանքով են ուշադրություն դարձրել առկա անհամապատասխանությունների վրա:

Նման պայմաններում ակնհայտ է, որ իրականում Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացրած Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, ուստի ակներև է, որ նման պայմաններում Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացրած առաջարկող ապրանքի տեխնիկական բնութագիրը չէր կարող գնահատվել հրավերի պահանջներին համապատասխանող:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից բողոքի քննության նիստի ժամանակ տրամադրված սերտիֆիկատին, ապա այս կապացությամբ հայտնում ենք, որ Հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով երկու չափաբաժինների համար նախատեսվել է ներկայացնել փորձարկման արձանագրություն ապրանքների համար, որը նշանակում է, որ ապրանքը մատակարարելիս, այլ ոչ թե որակավորման գնահատման փուլում, մատակարարը պարտավորվում է ապրանքի հետ միասին ներկայացնել այդ ապրանքների խմբից վերցված որևէ ցանկացած նմուշի փորձարկման արձանագրություն: Փորձարկման արձանագրությունը իրենից ներկայացնում է մի փաստաթուղթ, որում մանրամասնորեն նկարագրված կլինեն պայմանագրով պահանջվող բոլոր պարամետրերի մասին տեղեկությունները (Կիրառվող հզորություն, լուսային հոսք, սնուցման լարում, թերմոդինամիկական ջերմաստիճան, լուսային դիոդի աշխատանքային հոսք և այլն):

Փորձարկման արձանագրության տեսակի մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար կից ներկայացնում ենք նման օրինակ փաստաթուղթ:

Արարատ Դարբինյան Ա/Ձ-ն իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրից հեռացրել է այդ մասը (ներկայացնել փորձարկման արձանագրություն) իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրությունը դաշտից, սրանով իսկ խուսափելով ապրանքի մատակարարման ժամանակ փորձարկման արդյունքների ապացույցներ՝ փորձարկման արձանագրություն, ներկայացնելու պատասխանատվությունից, որն ի դեպ նշանակում է, որ շատ հնարավոր է, որ հետագայում մատակարարվող ապրանքը ոչմի կերպ չի համապատասխանելու հրավերով նախատեսված պայմաններին:

Իսկ ինչ վերաբերում է ԱրարատԴարբինյան Ա/Ձ-ի կողմից որակավորման պահանջների գնահատման փուլում ներկայացված «Ֆեռոն» ընկերությանը տրված EAC

(մաքսայինմիության) համապատասխանության սերտեֆիկատներին, դրանք ընդամենը «Ֆեռոն» ընկերության արտադրանքի EAC ստանդարտներին համապատասխանության մասին փաստաթղթեր են, որոնցում բացարձակապես չի նկարագրվում ապրանքների պարամետրերի մասին տեղեկություններ և որը պատվիրատուի կողմից հրավերով երբևէ նախատեսված չի եղել ներկայացնելու պայման, այն ներկայացվել է մասնակցի կողմից հենց այնպես:

Խնդրում եմ հաշվի առնել նաև ներկայացված վերոհիշյալ լրացուցիչ փաստարկները և բավարարել Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանի կողմից 30.05.2019թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/37 բողոքը:»:

3. <u>Արարատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.05.2019թ. գրությամբ դիմել է Արարատի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից 31.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 05.06.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լեդ լուսատուների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04» ծածկագրով մրցույթի հաղթող Ա/Ձ Արարատ Դարբինյանին 21.05.2019թ. Ժամը 12.26-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկուսյացվել է առաջարկ որոկավորման չափորոշիչները ներկայացնելու մասին: 23.05- .ժամ 10.02-ին . ստացվել է Ա/Ձ Արարատ Դարբինյանի որակավորման չափորոշիչները ստորագրված. 23.05. - ժամ 12 58-ին առաջարկվել է չափորոշիչները ուղարկել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված 23.05 ժամը 13.44-ին ստացվել է էլեկրոնային ստորագրությամբ հաստատված, որն էլ ընդունվել է հիմք: Վերջինս Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանի պահանջով էլեկտրոնային փոստով ուղարկվել է նրան: 24.05 ժամը 9.00-ին ստացվել է գնահատման ՊԵԿ աշխատակազմի կողմից տեղեկատվություն: Որակավորման չափորոշիչները, գնահատման թերթիկները և ՊԵԿ տեղեկատվությունը քարտուղարի կողմից 24.05 ժամը 9.10-ին տրամադրվել է գնահատող հանձնաժողովի անդամներին:

Տեխ. Բնութագրի մեջ նշված լուսային 9500լմ բառից բացակայում է հոսք բառը, կմ լուսային հոսք չափման միավորն չի կարելի համարել տեխնիկական վրիպում:

Փորձարկման արդյունքների մասով մասնակցի կողմից ներկայացված ERA կողմից տրված N TC RU C_CN AB36 BO1475 սերտիֆիկատը լիովին բավարար է:

2-րդ չափաբաժնում տեխ. բնութագրի մեջ 1 հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը մասնակցի կողմից ներկայացվել է 140Lm/1w, գնման հայտով պահանջվել է 150-170Lm/1w: Գնահատող հանձնաժողովի կողմից բաց թողնված վրիպակ է, ուստի առաջարկություն կարվի մասնակցին ճշտել որակավորման չափորոշիչը և ապրանքը մատակարարել 1 հատ լուսային դիոդի աշխատանքային հոսքը 150-170Lm/1w սահմաններում:»:

4. <u>Երրորդ անձ «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ն 05.06.2019թ. ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արարատի համայնքապետարանի կողմից հայտարարվել է « ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ _19 /04» գնանշման հարցման ծածկագրով մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐԱՐԱՏ ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՁ»-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի՝ Ընթացակարգի 1 և 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արարատ Դարբինյանը:

Պատվիրատուի կողմից առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Ա/Ձ Արարատ Դարբինյանը նշված ժամկետում ուղղարկել է պահանջվող փաստաթղթերը: Նշեմ, որ ուղղարկվել է 2 անգամ և պատվիրատուի կողմից սահմանափակում չի առաջարկվել այդ մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արարատ Դարբինյանը 1 և 2 չափաբաժինների մասով և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ա/Ձ Արարատ Դարբինյանը հայտնում է, որ պատրաստ է շտկելու և ներկայացնելու համապատասխան որակավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ երթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդ աշխատանքային օրը հանձնաժողովի

քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կարգի 46-րդ, 47-րդ, 48-րդ կետերի համաձայն՝

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Արարատի համայնքապետարան պարտվիրատուի կողմից, ընդունվել է և չի մերժվել որակավորման փաստաթղթերը, միևնույն ժամանակ նաև պարտվիրատուի կողմից չի

առաջարկվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և հետ ուղղարկել նոր որակավորման փաստաթղթեր:

Այս ամենից ելնելով 46-րդ հոդվածում սահմանվեց, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապա-տասխանությունները:

Վերը նշվածից փաստեմ, որ Պատվիրատուն Ա/Ձ Արարատ Դարբինյանի հայտի 6.1 հավելվածում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն պետք է ղեկավարվեր Կարգի 46-րդ կետով և հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրեր հայտնաբերված անհամապատասխանությունները (Նշեմ որ «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ _19 /04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2019թ. տեղի ունեցած նիստում թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Արարատ Դարբինյանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները գնահատվել են բավարար), մինչդեռ նշեմ կրկին, որ Ա/Ձ Արարատ Դարբինյանը հայտնում է, որ պատրաստ է շտկելու և ներկայացնելու համապատասխան որակավորումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ԱՁ Եղիսաբեթ Ալմազյանի և Ա/Ձ Արարատ Դարբինյանի գնային առաջարկներում առկա էր բավականին մեծ չափի մոտ 4 610 000 ՀՀ դրամի տարբերություն, որը կարծում ենք մեծ նշանակություն կունենա համայնքապետարանի բյուջեի համար:

Նաև նշեմ մի կարևոր հանգամանք ևս «ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ընկերության կողմից չի ներկայացվել, քանի որ տվյալ ապրանքն իհարկե արտադրվել է Չինաստանում, բայց փորձարկումն արվել է ՌԴ-ում և ինչպես գիտենք մենք և ՌԴ դաշնությունը համարվում ենք ԵՏՄ անդամ:

ԵՏՄ գործունեության մասին.

Եվրասիական տնտեսական միությունը միջազգային ինտեգրացիոն տնտեսական միավորում է, որը հիմնադրվել է Եվրասիական Տնտեսական Ընկերակցության Մաքսային Միության հիման վրա՝ 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի ստորագրմամբ և ուժի մեջ է 2015 թվականի հունվարի 1-ից: Ներկայումս ԵՏՄ կազմում ընդգրկված են հինգ երկրներ. Հայաստանի

Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը: Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն Միության հիմնական նպատակներն են՝ անդամ պետությունների տնտեսության կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը, Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկա ձևավորելու ձգտումը, համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը: 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ք.Մինսկում ստորագրվել է «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապության անդամակցության մասին» պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից: (Կայք՝ www.eaeunion.org/ http://www.petekamutner.am):»

Ի լրումն վերը նշված գրության, «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ն 18.06.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լյումեն (նշանակումը՝ լմ, lm), լույսի հոսքի չափման միավոր, Միավորների միջազգային համակարգում: 1 լյումենը այն լուսային հոսքն է, որ առաքվում է 1 մոմ լույսի ուժ ունեցող կետային իզոտրոպ աղբյուրից 1 ստեռ մարմնային անկյան մեջ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից նշված այն դիտարկմանը, որ լմ-ի չափը կարող է եռակի և քառակի անդամ փոխել ապրանքի գինը, նշեմ որ գին որոշող գործոն իհակե հանդիսանում է, բայց ոչ եռակի և քառակի դրանք այլ գործոնների արդյունք են և եթե բողոքաբերը նկատել է Ա/Ձ Արարատ Դարբինյանը իր որակավորման մեջ հենց նշել է պահանջվող 9500 լմ-ը (պատվիրատուի նշված պահանջը) և դա այստեղ գին որոշող գործոն հանդես գալ չէր կարող, իսկ նախադասության մեջ լուսային հոսք բառակապակցության բացակայությունն էլ չի կարող տարակարծության պատճառ դառնալ լմ-ը հենց լուսային հոսքի չափման միավոր է:

Ընկերության կողմից ներկայացվել է սերտիֆիկատ, որը տրվում է ապրանքի փորձարկում անցնելու արդյունքում և քանի որ տվյալ ապրանքն իհարկե արտադրվել է Չինաստանում, բայց փորձարկումն արվել է ՌԴ-ում և ինչպես դիտենք մենք և ՌԴ դաշնությունը համարվում ենք ԵՏՄ անդամ հետևաբար մեր կողմից ներկայացված սերտիֆիկատը բավարարում է պատվիրատուի պահանջը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյան, ցանկանում ենք ևս մեկ անգամ նշել, որ պատվիրատուի կողմից Ա/Ձ Արարատ Դարբինյանին, ինչպես հարկն է չի ծանուցվել, որ նա շտկի իր որակավորման փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ երթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդ աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կարգի 46-րդ, 47-րդ, 48-րդ կետերի համաձայն՝

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշրկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այս ամենից ելնելով 46-րդ հոդվածում սահմանվեց, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերը նշվածից կրկին փաստում եմ, որ Պատվիրատուն Ա/Ձ Արարատ Դարբինյանի հայտի 6.1 հավելվածում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն պետք է ղեկավարվեր Կարգի 46-րդ կետով և հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մարամասն նկարագրեր հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ նշեմ կրկին, որ Ա/Ձ Արարատ Դարբինյանը հայտնում է, որ պատրաստ է շրկելու և ներկայացնելու համապատասխան որակավորումը:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2019/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Արարատի համայնքապետարանի կարիքների համար լեդ լուսատուների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Արարատ Դարբինյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.05.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրաբերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ուն առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Գործում առկա նյութերի համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ 23.05.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայցվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 6.1 հավելվածը, որը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Արարատ Դարբինյանի կողմից: Գործում առկա է նաև Մասնակցի կողմից ներկայացված թիվ 6.1 հավելվածը, որում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, սակայն առկա է կնիք և ստորագրություն:

Հանձնաժողովի 24.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն.

- ՀՀ ՊԵԿ կողմից ստացվել է եզրակացություն, որի համաձայն Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գխով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

- Մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

- Հիմք ընդունելով նույն արձանագրությունը՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է հայտարարել «Արրատ Դարբինյան» Ա/Ձ-ին և որոշել է Մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

27.05.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որով սահմանվել է անգործության ժամկետ՝ հինգ օրացուցային օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում որևէ անհամապատասխանություն չի արձանագրել և Մասնակցի չի առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

Պատվիրատու՝ Արարատի համայնքապետարանը և «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ն իրենց կողմից Բողոքներ քննող անձին ուղղված գրություններով ընդունել են Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերի և հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրեի միջև առկա անհամապատասխանությունները:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Եղիսաբեթ

Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից 30.05.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը

հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Արարատի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրաբերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ուն առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայցվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 6.1 հավելվածը, որում բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը, սակայն առկա է եղել կնիք և ստորագրություն: Սակայն Մասնակիցը, նույն օրը, սահմանված ժամկետում այն է՝ 23.05.2019թ., ներկայացրել է թիվ 6.1 հավելվածը՝ որը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Արարատ Դարբինյանի կողմից:

Քանի որ Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը միայն հանձնաժողովի

քարտուղարն հանձնաժողովի անդամներին պետք է տրամադրեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը մինչև հանձնաժողովի անդամներին օրենքով նախատեսված կարգով փաստաթղթերի ներկայացնելը՝ սահմանված ժամկետում արդեն շտկել և ներկայացրել էր թիվ 6.1 հավելվածը, ուստի հանձնաժողովի կողմից որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել՝ հետևաբար նաև այդ մասով շտկում չի պահանջվել:

Հանձնաժողովի 24.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը միայն արդեն ուսումնասիրել է Մասնակցի կողմից ներկայացված ապրանքների համապատասխանությունը հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում որևէ անհամապատասխանություն հանձնաժողովը չի արձանագրել և որոշել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ին և Մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատու՝ Արարատի համայնքապետարանը և «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ն ընդունել են, որ Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերի և հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրեի միջև առկա է անհամապատասխանություններ, որը Մասնակիցը պարտավորվել է շտկել, եթե Հանձնաժողովն իրեն ընձեռնի այդ հնարավորությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների գնման դեպքում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը:

Սակայն, սույն գործի փաստերի համաձայն, գնահատող հանձնաժողովը առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների տեխնիկական բնութագրում որևէ անհամապատասխանություն չի արձանագրել, ինչով պայմանավորված վերջինիս չի առաջարկվել շտկել անհամապատասխանությունը: Այս պարագայում Հանձնաժողովի

կողմից խախտվել է Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները, ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը, որպիսի պայմաններում «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքն այս մասով ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից այն պնդմանը, որ բացակայում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որևէ նիստի արձանագրություն, որով «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ից պահանջված կլինեին կատարել շտկում ներկայացված փաստաթղթերում, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից առաջին դեպքում Մասնակցից չի պահանջվել շտկում, քանի որ վերջինս սահմանված ժամկետում ինքն է շտկել և էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացրել թիվ 6.1 հավելվածը, իսկ երկրորդ դեպքում չարձանագրելով ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունները՝ խախտել է Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջներով և առաջարկեր «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ի շտկել առկա անհամապատասխանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԱՄԱՀ_ԳՀԱՊՁԲ_19/04» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով «Արարատ Դարբինյան» Ա/Ձ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին և նույն չափաբաժինների մասում պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**